ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -	042101.00.6	«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ -	042101.01.6	«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ -	ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ	

ՎԱՆԱՁՈՐ 2024

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	042101.00.6 Իրավագիտություն
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	042101.01.6 Իրավագիտություն
3. Շնորհվող որակավորումը	Իրավագիտության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	հայերեն
6. Ուսուցման ձևը	առկա
7. Ուսումնառության ժամկետը	2023-2027թթ.

8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները

Ուսումնառության և դասավանդման մոտեցումներ

Ուսումնառության իրականացման հիմնական ձևերն են՝

- դասախոսություններ,
- գործնական պարապմունքներ, սեմինարներ,
- ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, նախագծեր, գործարար խաղեր),
- մասնագիտական պրակտիկաներ:

Կիրառվող ուսումնառության եղանակներն են.

Պորտֆոլիո, ինտեգրված հանձնարարությունների համակարգեր, իրավիճակային հանձնարարություններ, գործնական-կիրառական ուղղվածություն ունեցող հանձնարարություններ, հրապարակային պաշտպանություն և ուսանողների նախագծային և հետազոտական գործունեության փորձաքննական գնահատական, մինիմալ կոմպետենտությունը բացահայտող թեստեր, ուսանողների ինքնուրույն աշխատանքի փորձաքննական գնահատում, մասնակցում հիմնահարցային սեմինարներին և քննարկումներին, բաց պատասխան, հարցեր ինքնավերլուծության համար:

Կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները.

Քննադատական մտածողություն, դատողությունների ձևակերպում (հիմնավորում, անդրադարձ, գնահատում, բանավարություն/եզրակացություն և այլն), էսսեների/ հրապարակախոսական ուրվագծերի գրություն/ պատրաստում (հիմնավորման առաջադրում և զարգացում, անդրադարձային գնահատական), իրավիճակի քննադատական վերլուծություն, ուսումնասիրված գրականության քննադատական գնահատական, տեղեկատվության կամ ելույթի նախապատրաստում (հիմնահարցի և լուծման եղանակներ), հոդվածի նախապատրաստում և տպագրում, մեկնաբանություններ՝ հոդվածի, գրքի, մենագրության վերաբերյալ, հիմնախնդրի լուծում /պլանավորում (հիմնախնդրի սահմանում և առաջադրում, տվյալների հավաքագրում և վերլուծություն, մեկնաբանում, փորձերի պլանավորում, տեղեկատվության և տեսության կիրառում), իրավիճակի /դեպքի վերլուծություն,

հիմնախնդիրների սցենավորում, իրավիճակի մոդելավորում, խմբային աշխատանք (տվյալ հիմնախնադրի կոլեկտիվ քննարկում և լուծման ուղիների որոնում), հիմնախնդիրներ /սեփական աշխատանքային փորձի քննարկում և անդրադարձ համակուրսեցիների հետ, իրական հիմնախնդրին վերաբերող հետազոտական հայտի նախագծի պատրաստում, գործողությունների կատարում/ցուցադրում (հաշվարկներ, աշխատանք տեքստերի հետ, արձանագրությունների լրացում, հրահանգների կատարում), տեսանյութի և ծրագրային մատակարարման օգտագործում, ներկայացման պաստառի նախապատրաստում, ուսանողի մտածելաոճի կառավարում և զարգացում (ինքնակառավարում և ինքնազարգացում), պորտֆոլիոների ստեղծում, ինքնագնահատականի իրագործում, փոխգնահատական, մասնակցություն խմբային նախագծերում և գնահատում, գիտելիքների /ըմբռնման ցուցադրում (վերարտադրում, նկարագրություն, թվարկում, փոխադրություն), բազմատարբերակային հարցաթերթերի լրացում, թեստային առաջադրանքների կատարում, ստուգողական հարցումներ, մասնակցություն մրցույթներում, կատարման որակի գնահատական, գրադարանային պաշարների ուսումնասիրություն, տվյալների բազայի ստեղծում, գրականության ցանկի համառոտ բնութագրում, բանավոր քննություն, գրավոր քննություն փակ դասագրքով, քննություն բաց դասագրքով, քննություն «դատողություն/մտորում/, թեստավորում (քննություն ընտրովի պատասխաններով և կարճ հարց ու պատասխաններով), հանրագումարային քննություն, միջանկյալ քննություն, մուտքային քննություն, ռեֆերատ, ինքնագնահատման աղյուսակ, հակիրճ շարադրանք, ընդարձակ շարադրություն, երեք մաս ունեցող օրագրեր, գնահատվող բանավեճ, գաղափարների/ հասկացությունների քարտեզագրում, բանավոր հարցում, թեստային գնահատում, ընտրովի պատասխան, ուղղորդված պատասխան, ուղղորդված հարց, հարց – պատասխան, ընթացիկ գնահատում, ամփոփիչ գնահատում, ձևավորող գնահատում, հետազոտական գնահատում:

9. Կրթական ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակաուղղված է քաղաքացիական բարձր գիտակցությամբ, հայրենասիրությամբ, իրավական պետության գաղափարները, օրինականությունը հարգող, իր մասնագիտական պարտքը գիտակցող, բազմակողմանի զարգացած մասնագետների պատրաստմանը՝ ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման հիման վրա:

10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները

ԳԻՏԵԼԻՔ

1. Գիտելիք և իմացություն

1) Հայաստանի և այլ երկրների պետության և իրավունքի պատմության վերաբերյալ հիմնարար գիտելիք:

2) Իրավական համակարգի կառուցվածքի և գործառույթների, դրա և՛ քաղաքական ու տնտեսական համակարգերի փոխազդեցության, և՛ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

3) Իրավունքի ընկալման հիմնական հայեցակարգերի, իրավաստեղծման, իրավաբանական տեխնիկայի և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

4) Իրավակիրառման (մասնավորապես՝ իրավաբանական փաստերի վերլուծության, իրավաբանական որակման, իրավական նորմերի և պայմանագրերի մեկնաբանման), իրավական կոլիզիաները լուծելու կանոնների և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

5) Իրավունքի հիմնական ճյուղերի (մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի, վարչական իրավունքի և վարչական դատավարության, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության, աշխատանքային իրավունքի, քրեական իրավունքի և քրեական դատավարության, էկոլոգիական իրավունքի, միջազգային հանրային իրավունքի, դրանց սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք:

6) Իրավական վեճերի լուծման և բանակցությունների վարման սկզբունքների ու տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

7) Մասնագիտական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հարակից ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների և կոռուպցիային հակազդման վերաբերյալ գիտելիք:

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Գիտելիքի և իմացության կիրառում

1) Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:

2) Կարող է ինքնուրույն կազմել և մշակել իրավական փաստաթղթեր, տալ իրավաբանական եզրակացություններ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն:

3) Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետության և համայնքի իրավունքներն ու օրինական շահերը:

4) Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերը:

5) Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել վերաբերելի դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին:

6) Կարող է վերհանել իրավական խնդիրը, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի իրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ:

7) Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ:

8) Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:

9) Կարող է ինքնուրույն կազմել և մշակել իրավական փաստաթղթեր, տալ իրավաբանական եզրակացություններ, տրամադրել իրավաբանական

խորհրդատվություն։

10) Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետության և համայնքի իրավունքներն ու օրինական շահերը։

11) Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերը։

12) Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել վերաբերելի դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին։

13) Կարող է վերհանել իրավական խնդիրը, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի իրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ։

14) Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ։

3. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ

1. Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել, բացատրել, ինչպես նաև՝ ստանալ իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, խնդիրներ և լուծումներ։
2. Կարող է իր գործունեության ընթացքում կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ իրավական խնդիրների լուծումն ապահովելու համար։
3. Կարող է հաղորդակցվել առնվազն մեկ մասնագիտական օտար լեզվով։
4. Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար։
5. Կարող է հետևել մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին՝ պատասխանատվությամբ իրականացնելով իր մասնագիտական գործառույթները։

4. Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)

1) Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար։

2) Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում։

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողություն-ները)

1) Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն։

2) Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին։

3) Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:

4) Ունակ է՝ աշխատելու թիմում:

5) Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

6) Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կրթական ծրագրի ուսումնական պլանը

Կցվում է

12. Գնահատման ձևերը

Գնահատման մեթոդներն և չափորոշիչներն ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին

- Գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների ընթացքում ուսանողի ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում
- Ինքնուրույն աշխատանքների /անհատական առաջադրանքներ/ հաշվառում և գնահատում
- Դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում

Ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

13. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Իրավագիտության բակալավրի որակավորում շնորհվում է այն շրջանավարտներին, որոնք ունեն հիմնարար, համակողմանի և համակարգված գիտելիքներ, հմտություններ, ինչպես նաև կարողություններ՝ իրավագիտության տարբեր ոլորտներում մասնագիտական գործունեություն ծավալելու և (կամ) ուսումը շարունակելու համար.

Իրավագիտություն մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է պաշտոն զբաղեցնել հետևյալ իրավապահ մարմիններում.

1. ՀՀ դատախազությունում,
2. ՀՀ արդարադատության համակարգում,
3. ՀՀ իրավապահ մարմիններում,
4. Իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպություններում:

Իրավագիտություն մասնագիտությունն առնչվում է հասարակական հարաբերությունների այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների ամբողջությունը, որն ուղղված է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը, դրա սկզբունքներին ու մեթոդներին:

Իրավագիտություն մասնագիտությամբ իրավագիտության բակալավրը պետական կրթական չափորոշիչով սահմանված մասնագիտական պատրաստվածությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

- իրավապահ մարմիններում (ՀՀ Դատախազություն, Ոստիկանություն, Ազգային անվտանգություն, Հարկային և Մաքսային մարմիններ, Նոտարիատ, Փաստաբանություն)
- հասարակական կազմակերպություններում
- գործադիր իշխանության կենտրոնական և տարածքային մարմիններում, ՏԻՄ-երում, կրթության ոլորտում:

14. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

ՄԿԾ-ի ռեսուրսների ապահովվածությունը ապահովող հիմքերը.

1. հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները
2. համակարգչային լաբորատորիաները, լսարանները և դրանց օգտագործման նպատակները
3. գրադարանի, պաշտոնական ինտերնետային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը
4. Ուսումնական ենթակառուցվածքները և ուսումնական ու հետազոտական գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան.

- լսարաններ
- համակարգչային լաբորատորիաներ, որոնք ապահովված են ինտերնետ կապով
- գրադարան, որն ունի ընթերցասրահ, և ապահովված է Wi-Fi-ով
- էլեկտրոնային գրադարան
- մարզահրապարակ
- մշակույթի կենտրոն:

Ռեսուրսների առկայությունը հանդիսանում է ցանկացած կրթական ծրագրի հաջող իրականացման նախապայման: Ռեսուրսների որակն անմիջականորեն ազդում է ծրագրի որակի վրա: Ռեսուրսների կարևորագույն բաղադրիչ է նաև հանդիսանում համարժեք դասախոսական և օժանդակ կազմը: Ռեսուրսները ներառում են նաև ուսումնական ենթակառուցվածքները և ուսումնական ու հետազոտական գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան: Ռեսուրսների այս երկու տեսակներն էլ ենթակա են անընդհատ մոնիթորինգի (հաշվառման) և կատարելագործման: Դասախոսական կազմի պարագայում, օրինակ, դա նշանակում է, որ բուհը պետք է հնարավորություն ընձեռնի իր դասախոսներին տիրապետելու դասավանդման և ուսուցման նոր մեթոդներին և ցուցաբերի համապատասխան օժանդակություն՝ պարբերաբար վերապատրաստումների միջոցով: ՎՊՀ- ում գործում է Կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոն, որը զբաղվում է

դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի որակավորման բարձրացմամբ:

15. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ».